ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/8017/02/24 քաղ. Երևան
8 Հոկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «Էսզեթ Ֆարմ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

«Էսզեթ Ֆարմ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ Պաշտպանության նախարարության և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի միջև 17.06.2024թ.-ին կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-24-9/5-7 պայմանագիրը 20.08.2024թ.-ին ՀՀ Պաշտպանության նախարաության կողմից միակողմանի լուծելն անվավեր ճանաչելու և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ Պաշտպանության նախարարության պատվիրատուի ղեկավարի 30.08.2024թ.-ի թիվ 142 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարությունից պետք է պահանջել 17.06.2024թ.-ին կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-24-9/5-7 պայմանագրի և ՀՀ Պաշտպանության նախարարության պատվիրատուի ղեկավարի 30.08.2024թ.-ի թիվ 142 որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«Էսզեթ Ֆարմ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ Պաշտպանության նախարարության և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի միջև 17.06.2024թ.-ին կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-24-9/5-7 պայմանագիրը 20.08.2024թ.-ին ՀՀ Պաշտպանության նախարաության կողմից միակողմանի լուծելն անվավեր ճանաչելու և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ Պաշտպանության նախարարության պատվիրատուի ղեկավարի 30.08.2024թ.-ի թիվ 142 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2.ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջել դատարան ներկայացնել 17.06.2024թ.-ին կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-24-9/5-7 պայմանագրի և ՀՀ Պաշտպանության նախարարության պատվիրատուի ղեկավարի 30.08.2024թ.-ի թիվ 142 որոշման գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թվականի նոյեմբերի 15-ին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.10.08 11:41:18 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am